# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2021թվականի N 14

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 26-ի N 5 արտահերթ նիստի օրակարգը.

1. Դիմիտրով համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

2. Համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսային մասում փոփոխություններ կատարելու մասին:

3. Համայնքային սեփականության գույքի վարձակալության տրամադրելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

"04200683"

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2021 թվականի N 15

## ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմիտրով համայնքի 03-038-0123-0011, 03-038-0126-0011, 03-038-0135-0011, 03-038-0136-0011 ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերը գտնվում են Դիմիտրով համայնքի վարչական սահմաններում գտնվող այն գյուղատնտեսական նշանակության հողատարածքների հատվածում, որոնք հիմնականում սեփականաշնորհված հողատարածքներ են և որոնք ըստ հողատեսքի վարելահողեր են, ներկա պահին չեն մշակվում, օտարված կամ տրամադրված չեն օգտագործման, իրենց տեղադիրքը և փաստացի չափերը ամբողջությամբ համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրովի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողերից Դիմիտրովի գյուղական համայնքին անհատույց փոխանցված Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 6-ի N 1436-Ն որոշմամբ հաստատված հավելված N 3-ով նախատեսված Դիմիտրովի գյուղական համայնքին անհատույց փոխանցված գյուղատնտեսական նշանակության հողամասերի տվյալների. ավագանին որոշում է՝

1.Դիմիտրով համայնքի վարչական սահմաններում գտնվող 03-038-0123-0011 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0,29159 հա վարելահողը, 03-038-0126-0011 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0,16058 հա վարելահողը,

03-038-0135-0011 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0,10256 հա վարելահողը, 03-038-0136-0011 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0,09927 հա վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն :

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե համապատասխան ճշգրտումներ կատարելու համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2021թվականի N 16-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ ավագանին որոշում է.

Համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պակասեցնել 50000(հիսուն հազար) դրամ՝

1) հավելված 2-ի աղյուսակի ոլորտներ սյունյակի 11 01 02 51 տողի պահուստային միջոցներ 4891 սյունյակի <<3006.3>> թվի փոխարեն կարդալ <<2956.3>> թիվը,

2) նույնի ընդամենը տողում և սյունյակում <<3006.3>> թվի փոխարեն կարդալ <<2956.3>> թիվը,

2. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պակասեցրած 50000 (հիսուն հազար) դրամը ավելացնել 01 01 01 51 /կառավարման մարմնի պահպանում ծրագիր/ 4212 / էներգետիկ ծառայություններ/ հոդվածին՝

1) հավելված 2-ի աղյուսակի ոլորտներ սյունյակի 01 01 01 51 տողի համապատասխան 4212 սյունյակի <<400.0>> թվի փոխարեն կարդալ <<450.0>> թիվը,

2) հավելված 2-ի աղյուսակի ընդամենը սյունյակի <<26110.0>> թվի փոխարեն կարդալ <<26160.0>> թիվը,

3) հավելված 2-ի աղյուսակի ընդամենը տողի <<900.0>> թվի փոխարեն կարդալ <<950.0 >> թիվը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 ապրիլի 2021թվականի N 17

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և քննարկելով <<ՅՈՒՔՈՄ>>, <<ՌԵԴԻՆԵՏ>>, <<ՌԵԱԼԹԱՅՄ>>, <<ԱՐՓԻՆԵՏ>> կազմակերպություններին՝ օպտիկական մալուխի անցկացման նպատակով, Դիմիտրով համայնքի փողոցային լուսավորության համակարգի հենասյուներ վարձակալության տրամադրելու վերաբերյալ հարցը, ավագանին որոշում է.

1. <<ՅՈՒՔՈՄ>>, <<ՌԵԴԻՆԵՏ>>, <<ՌԵԱԼ ԹԱՅՄ>>, <<ԱՐՓԻՆԵՏ>> կազմակերպությունների հետ Դիմիտրով համայնքի փողոցային լուսավորության հենասյուների վարձակալության վերաբերյալ պայմանագրեր կնքել՝ ելնելով բոլորին միևնույն պայմանները առաջարկելու սկզբունքից, դրանով իսկ ապահովվելով հավասար մրցակցային պայմաններ բոլորի համար:

2. <<ՌԵԴԻՆԵՏ>> կազմակերպության հետ 2019 թվականի դեկտեմբերի 09-ի N 32 որոշման հավելվածը /պայմանագրի տեքստը/ փոխարինել սույն որոշման հավելված N 1–ով /պայմանագրի տեքստը նոր խմբագրմամբ/:

3. Համայնքի ղեկավար Արման Իոնանովին տալ համաձայնություն <<ՅՈՒՔՈՄ>>, <<ԱՐՓԻՆԵՏ>>, <<ՌԵԱԼ ԹԱՅՄ>> կազմակերպությունների հետ կնքելու համայնքի փողոցային լուսավորության հենասյուների

վարձակալության մասին պայմանագրեր՝ համաձայն հավելված N 2 -ի, հավելված N 3-ի և հավելված N 4–ի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ